ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-25/1

ք. Երևան 10. 04 . 2025թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Գ. Եղիազարյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Մաստարա>> ԱԿ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ալեքսանյանի, որը գործում է կոոպերատիվի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **«Երևանի Միքայել Նալբանդյանի անվան հ. 33 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի նախագծանախահաշվային փաստաթղթերը ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի «Ձորակապ միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տարածքում տեղակայման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայության մատուցման** պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

ա. շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 22-րդ կետի պահանջներին համապատասխան,

բ. ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

գ. ներկայացնել աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը,

դ. պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնում է հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 օրացուցային օրվա (պարզ և համալիր փորձաքննությունների դրական եզրակացությունները ստանալուց հետո) ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 4 602 000 (չորս միլիոն վեց հարյուր երկու հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի պայմանագրում նշված հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (Հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա նախավերջին աշխատանքային օրը:

4.3 Ծառայության դիմաց վճարումը կիրականացվի քաղաքաշինական պարզ փորձաքննության դրական գրավոր եզրակացությունը, համալիր փորձաքննության դրական եզրակացությունը ստանալուց հետո:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում

նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին.

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը,

իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է (անհրաժեշտության դեպքում երաշխիքի ձևով ներկայացրած ապահովման ժամկետի երկարաձգումը հավաստող փաստաթղթի առկայությամբ):

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.12 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված են ֆինանսական միջոցներ, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<Մաստարա>> ԱԿ
ք. Երևան, հանրապետության հրապարակ	ՀՀ Սյունիքի մարզ, ք. Գորիս, Բակունցի 66
կառավարական տուն 3	<<Արդշինբանկ>> ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 247570022779
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 09203764
Հ/Հ 900011055382	Տնօրեն՝
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	
_____ Գ. Եղիազարյան	_____ Ա. Ալեքսանյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
10.04.2025թ. կնքված
N ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-25/1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
					հասցեն	ժամկետը
1	71241200/34	դրամ	4 602 000	1	Շիրակի մարզ գյուղ Ձորակապ	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից 90 օրացուցային օր
տեխնիկական բնութագիրը						

1.	Նախագծման հիմքը	**ՀՀ կառավարության 27.12.2024թ N 2060-Ն որոշում**
2.	Պատվիրատու	ՀՀ քաղաքաշինության կոմիտե
3.	Նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթեր	Ճարտարապետահատակագծային առաջադրանքը և ենթակառուցվածքների վերաբերյալ տեխնիկական պայմանները կամ դրանց հնարավորության վերաբերյալ շահագործողի գրությունները կտրամադրվեն պատվիրատուի կողմից
4.	**Ելակետային տվյալներ**	Մարզադահլիճի շենքը տեղակայվելու է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 2603149 վկայականում ամրագրված հողամասի սահմաններում: Շենքի տեխնիկական վիճակի և սեյսմիկ խոցելիության աստիճանի գնահատման եզրակացություն: Տիպարային նախագծի օրինակ Հողամասի մակերեսը՝ 1. 9439 հա Տարածքը գտնվում է Շիրակի մարզ գյուղ Ձորակապ հասցեում
Նախագծերի կազմման համար հիմք հանդիսացող գործընթացներ		
5.	Ինժեներագեոդեզիական հանութագրում, հողհատկացման հիմքերի ձեռքբերում	Իրականացնել տարածքի գեոդեզիական հանութագրում, հատակագծերի և բնորոշող կտրվածքների կազմում՝ մշակում: Նշել գոյություն ունեցող ինժեներական ցանցերը, ոչ համայնքային պատկանելության տարածքներն ու կառույցները: Հանույթը համաձայնեցնել ինժեներական ցանցերը շահագործող և այլ շահագոգիռ կազմակերպությունների հետ: Ամրագրել և ներկայացնել հենանիշերի (реперр) ցուցակ
6.	Ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական հետազոտություն	Համաձայն գործող նորմերի պահանջների՝ հորատման միջոցով իրականացնել ինժեներաերկրաբանական հետազորություններ և տրամադրել մանրամասն եզրակացությունները ու տեխնիկական պահանջներ, ըստ հորատահանուկի լաբորատոր փորձարկման արդյունքների որոշել գրունտների տեսակները, ինչպես նաև դրանց մշակման կարգերը: Ինժեներաերկրաբանական հետազոտության հորատման տեղերի ընտրությունն իրականացնել նախագծի ճարտարապետի հանձնարարականով, գեոդեզիական հանույթի հատակագծում նշված կոորդինատներով, որոնք հնարավորինս մոտ պետք է լինեն կրող առանցքներին: Հորատահանուկի (керн) համար ապահովել պահպանում, նմուշների համար նախատեսված արկղերով մինչև հիմքի աշխատանքների ավարտ: Գրունտային ջրերի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում:
7.	Ինժեներական հաղորդակցուղիների ուսումնասիրություն	Ուսումնասիրել գոյություն ունեցող արտաքին ինժեներական հաղորդակցուղիների (ջրամատակարարում, էլեկտրամատակարարում, գազամատակարարում) առկայությունները, տեխնիկական վիճակները և տրամադրել եզրակացություններ: Անհրաժեշտ հատակագծային լուծումների ընտրություններ:

8.	Ոլորտային (շահագրգիռ) մարմինների եզրակացություններ	Ոլորտային (շահագրգիռ) մարմինների եզրակացություններ, եթե այդպիսիք անհրաժեշտ են (շրջակա միջավայր, կրթություն, մշակույթ և սպորտ, արտակարգ իրավիճակներ, առողջապահություն և այլն):
9.	Կառույցի բնութագիրը և նախագծային պահանջներ	• Գոյություն ունեցող կիսաքանդ մասնաշենքի, շինությունների քանդման նախագծերի տրամադրում, որոնց տարածքում կառուցվելու է նոր մարզադահլիճի մասնաշենք՝ տաք անցումով: • Նախատեսվում է տեղակապել տրամադրված մարզադահլիճի նախագիծը՝ պատերը և տանիքը սենդվիչ պանելներից, բարձրությունը՝ 5,8-6մ: • Տիպային նախագծում նախագծված են օժանդակ սենքեր՝ հանդերձարաններ, մարզիչի սենյակ, մարզական գույքի սենյակ երկաթբետոնյա կարկասով: Մասնաշենքի պատերը 20 սմ հաստությամբ և 10 սմ ջերմամեկուսացման շերտով: Տանիքը փայտյա ծպեղնային համակարգով՝ միաթեք: Անհրաժեշտ է ուսումնասիրել և անհրաժեշտության դեպքում առաջարկել ծածկի սենդվիչ պանելների միացման հուսալի հանգույցներ, տրամադրել նախագիծ: • Ուսումնասիրել նախագծով նախատեսված ներքին ինժեներական ենթակառուցվածքների /սառը և տաք ջրամատակարարման, կոյուղու, ջեռուցման, էլեկրամատակարարման, օդափոխության և օդորակման, սառնամատակարարման, հակահրդեհային ազդանշանման, հրդեհաշիջման, տեսահսկման, գազամատակարարման կապի, անվտանգության համակարգերի, ջրահեռացման, հողանցման/ համակարգերը և տրամադրել ըստ նշանակության արտաքին համակարգերին միացման նախագծեր, անհրաժեշտության դեպքում ներկայացնել առաջարկներ: • Ուսումնասիրել նախագծով նախատեսված հենաշարժային համակարգի խախտումներ և հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի տեղաշարժն ապահովող անհրաժեշտ նախագծային լուծումները և անհրաժեշտության դեպքում ներկայացնել առաջարկներ: • Նախագծով նախատեսել մարզադահլիճի հարակից տարածքի՝ անհրաժեշտ հիմնավորումով նաև այլ հատվածների բարեկարգում, ասֆալտապատում, կանաչապատում՝ ըստ անհրաժեշտության ոռոգման համակարգ, արտաքին լուսավորություն, ըստ անհրաժեշտության (եթե մասնագիտական եզրակացությամբ դրանք ենթակա կլինեն) արտաքին հաղորդակցուղիների կառուցման, քանդման կամ վերակառուցման և այլն, էներգետիկ նշանակության շինություններ (ենթակայաններ, գազամատակարարման, ջրամատակարման, կոյուղու, ջրահեռացման ապահովման սարքեր-սարքավորումներ) ըստ անհրաժեշտության և տեխնիկական պայմանների՝ ծրագրի շրջանակներում անհրաժեշտ տարածքի ընդգրկումով, • պահանջվող բոլոր սարք սարքավորումների, գույքի (ներառյալ սպորտային) վերաբերյալ մասնագրերում ներառել մանրամասն տեխնիկական բնութագրերը • Նախագծման ընթացիկ աշխատանքները աշխատանքային կարգով համաձայնեցնել պատվիրատուի հետ՝ միաժամանակ ապահովելով նորմատիվ պարտադիր պահանջները (այդ թվում հաշմանդամների տեղաշարժի համար մատչելի պայմանների ապահովման) և օգտագործելով արդի մոտեցումներ, ծագած բոլոր հարցերը քննարկելով պատվիրատուի հետ: • Նախագծի վերաբերյալ այլ մանրամասնությունները և պահանջները կներկայացվեն պատվիրատուի կողմից նախագծի էսքիզային տարբերակի քննարկման ժամանակ: • Մանրամասն կահավորման նախագիծ (կահավորանքի մանրամասն բնութագրերով և մոդելավորմամբ, որը պետք է ներառված լինի նախահաշվում) • Նախագծողի կողմից շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) եզրակացության ձեռքբերում (դրա անհրաժեշտության դեպքում):
10.	**Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ**	**Նախագծի մշակում ըստ նորմատիվային պահանջների՝** • «Քաղաքաշինության մասին» օրենք • «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենք • «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենք • **ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի**

		«ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» **N 263-Ն հրաման,** • **ՀՀ քաղաքաշինության նախարարի 2003 թվականի մայիսի 13-ի «ՀՀՇՆ IV-11.03-03-02 (ՄՍՆ 2.02-05-2000) «Ավտոկայանատեղեր» շինարարական նորմերը հաստատելու մասին» N 28-Ն հրաման** • **ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հունիսի 22-ի** «ՀՀՇՆ 30-02-2022 «Տարածքի բարեկարգում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հունիսի 14-ի N 11-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» **N 12-Ն հրաման,** • **ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի** «ՀՀՇՆ 20-04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի N 24-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» **N 102-Ն հրաման,** • **ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի** ՀՀՇՆ 31-03-«Հասարակական շենքեր և շինություններ» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին> **N 95-Ն հրաման,** • **ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 10-ի** «ՀՀՇՆ IV-11.07.01-2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերի հաստատման մասին» **N 253-Ն հրաման,** • **ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի** «ՀՀՇՆ 22-03-2017 «Արհեստական և բնական լուսավորում» շինարարական հորմերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու և մի շարք հրամաններ ուժը կորցրած ճանաչելու մասին» **N 56-Ն հրաման,** • **ՀՀ քաղաքաշինության նախարարի 2004 թվականի օգոստոսի 4-ի** «ՀՀՇՆ IV-12.02.01-04 «Ջեռուցում, օդափոխում և օդի լավորակում» շինարարական նորմերը հաստատելու մասին» **N 83-Ն հրաման,** • **ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի** «ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» **N 78-Ն հրաման** • **ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի** «ՀՀՇՆ 40-01.01-2014 «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» **N 80-Ն հրաման,** • **ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի** ՀՀՇՆ 40-01.02-«Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 01.10.2001թ N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» **N 103-Ն հրաման,** • **ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի** «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին» **N 1504-Ն որոշում,**

		• **ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի** «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» **N 526-Ն** որոշման Կարգի 33-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներ • **ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի** <Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին> **N596-Ն որոշում** • **ՀՀ կառավարության 13.12.2007թ** <ՀՀ պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնվող, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվները հաստատելու և ՀՀ կառավարության 14.06.2001թ N 532 և 03.05.2001թ որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին> **N 1490-Ն որոշում**, • ***ՀՀՇՆ 52-01-2021-«Բետոնե եվ երկաթբետոնե կոնստրուկցիաներ»*** • ***ՀՀՇՆ 53-01-2020-«Պողպատե կոնստրուկցիաներ»*** • **ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 05.04.2018թ** <Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածուին հավանություն տալու մասին> **թիվ 43-Ա հրաման**, • **ՀՀ կառավարության 16.02.2006թ թիվ 392-Ն որոշում** «Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին» և այլն (պարտադիր այլ նորմատիվա-տեխնիկական փաստաթղթեր)
11.	**Նախագծման փուլերը**	**Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնների ապահովում՝** ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 11.09.2017թ N128-Ն հրամանի համաձայն: Նախագծային աշխատանքների իրականացում 1 փուլով «Աշխատանքային Նախագիծ» (աշխատանքային փաստաթղթեր)
12.	**«Աշխատանքային նախագիծ» (Նախագիծ)**	**<u>Նախագծի լրակազմում ընդգրկվող (մշակվող) փաստաթղթեր</u>** **1. Ընդհանուր բացատրագիր հատոր** - Բացատրագիր, հաշվարկներ, վերլուծություններ, - Ելակետային տվյալներ և փաստաթղթեր - Կոնստրուկտորական հաշվարկների հաշվետվություն - Ինժեներական մասերի հզորությունների հաշվարկների հաշվետվություն - բնապահպանական ռիսկերի նվազեցման միջոցառումների նկարագրություններ, ելակետային տվյալներ, Ճարտարապետահատակագծային առաջադրանք (նախագծման թույլտվություն), նախագծման առաջադրանք - և այլն **2. Հողամասի հատակագծային կազմակերպման ուրվագիծ** (կամ հողամասի գլխավոր հատակագիծ) **3. Ճարտարապետաշինարարական մաս** - Ծավալահատակագծային լուծումներ, ճակատներ, կտրվածքներ, առաստաղների արտացոլված հատակագծեր, մասնագրեր և մանրամասն հանգույցներ /այդ թվում շենքերի կահավորման հատակագիծ/ - Եռաչափ մոդելավորում - Մանրամասն կահավորման նախագիծ (կահավորանքի մանրամասն բնութագրերով և մոդելավորմամբ) **4. Կոնստրուկտիվ մաս** - Կոնստրուկտիվ լուծումներ, - կոնստրուկտորական հաշվարկների հաշվետվություն

		5. Ինժեներական (ներքին) լուծումներ (գծագրական և տեքստային նյութեր՝ այդ թվում մասնագրեր) - սառը և տաք ջրամատակարարման, կոյուղու, ջրահեռացման, հրդեհաշիջման, ջեռուցման, էլեկրամատակարարման, հողանցման, օդափոխության, օդորակման, սառնամատակարարման՝ ըստ պահանջի, տեսահսկման, գազամատակարարման, հակահրդեհային ազդանշանման, կապի և անվտանգության համակարգերի և այլն, - Ինժեներական մասերի հզորությունների հաշվարկների հաշվետվություն **6. Արևային ջրատաքացման համակարգի նախագիծ** **7. Ֆոտովոլտային համակարգի նախագիծ** **8. Շինմոնտաժային աշխատանքների նախահաշիվ՝** ներառյալ սարք-սարքավորումներ, ՀԾԿ-ի կողմից սահմանված միանվագ ծախսեր և այլ անուղղակի ծախսեր **9. Գնահատված ծավալաթերթ (միավոր գներով) / երկլեզու՝ հայերեն-ռուսերեն տարբերակները առանձնացված/** **10. Ծավալաթերթ-նախահաշիվ / երկլեզու՝ հայերեն-ռուսերեն տարբերակները առանձնացված/** **11.** Շինարարության կազմակերպման նախագիծ **12.** Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված միջոցառումներ **13.** Հաշմանդամների համար մատչելիության ապահովմանն ուղղված միջոցառումներ **14.** Էներգախնայողությանն և էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումներ: **15.** Այլ փաստաթղթեր, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ (ինժեներատեխնիկական անվտանգություն, վտանգավոր արդյունաբերական օբյեկտների անվտանգության միջոցառումներ, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ միջոցառումներ **16.** Նախագծով նախատեսված նյութերի և սարքավորումների երաշխիքային ժամկետների ցանկ **17.** Ինտերիերի դիզայն ընդհանուր տարածքների, բոլոր տիպային սենյակների ներառմամբ՝ գունային լուծումներով (յուրաքանչյուր տիպի տիպային սենյակների համար հնարավոր է 1 ընդհանուր դիզայնի օրինակ), ներառյալ կահավորման նախագծերը ու կահույքի դիզայնի աշխատանքները, ընդ որում ներկայացնելով կահավորանքի մանրամասն տեխնիկական բնութագրեր և գունային լուծումներ /3D պատկերների ներկայացում բարձր որակի կատարման ու ներկայացման ապահանջով/:
13.	<u>**Համաձայնեցումներ**</u>	<u>*Նախագծի համաձայնեցում*</u> **1.** Մարզպետարան և համայնքապետարան **2.** ՀՀ ԿԳՄՍ նախարարություն **3.** ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի, **4.** ՀՀ առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնի, **5.** ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի **6.** Ինժեներական ցանցերը շահագործող և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ
14.	**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԿԵՏ (ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ)**	Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և պատվիրատուին հանձնման ժամանակահատվածը նախատեսվում է պայմանագիրն (համաձայնագիրն) ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից՝ 90 օրացուցային օր
15.	<u>**ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱՄՇԱԿՈՒՄ**</u>	ՆՆՓ-ն Պատվիրատուի նախաձեռնությամբ կներկայացվի պարզ և համալիր քաղաքաշինական փորձաքննության: Ըստ անհրաժեշտության, եթե 1. պատվիրատուի նախաձեռնությամբ իրականացվող քաղաքաշինական ***պարզ փորձաքննության արդյունքներով տրվել է եզրակացություն, հետևյալ ձևակերպմամբ «Նախագիծը վերադարձվում է լրամշակման»,*** նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակումն իրականացվում է

		առանց ֆինանսական փոխհատուցման՝ առավելագույնը 10-օրյա ժամկետում: 2. պատվիրատուի նախաձեռնությամբ իրականացվող համալիր փորձաքննության գործընթացի արդյունքներով, եթե տրվում է բացասական եզրակացություն կամ դրական եզրակացություն՝ պայմանով, որ անհրաժեշտ է կատարել որոշակի լրամշակում, նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակումն իրականացվում է առանց ֆինանսական փոխհատուցման՝ առավելագույնը 20-օրյա ժամկետում:
16.	**ՄԱՏՈՒՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ**	Նախագծային աշխատանքների ֆինանսավորումը կկատարվի քաղաքաշինական պարզ փորձաքննության դրական գրավոր եզրակացությունը, համալիր փորձաքննության դրական եզրակացությունը ստանալուց հետո:

Գիրք	Անվանում	Բովանդակություն	Քանակ	
			Հայերեն	Ռուսերեն
Գիրք-1	Բացատրական մաս	Բացատրագիր, ելակետային տվյալներ հաշվարկներ, վերլուծություններ, բնապահպանական ռիսկերի նվազեցման միջոցառումների նկարագրություններ, Ճարտարապետահատակագծային առաջադրանք (նախագծման թույլտվություն), նախագծման առաջադրանք և այլն: Բաժին 7, 8, 9 և 13-ի նշված եզրակացությունները,հաշվարկները և նկարագրերը և բաժին 14-ի «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ» կետ 1-ում և 11-ից 14 կետերում նշված նյութերը և միջոցառումների նակարագրերը:	6	2
Գիրք-2* և մաս հատորներ	Գծագրական մաս	Աշխատանքային մանրամասն գծագրեր՝ բաժին 14-ի «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ» կետ 2, 3, 4, 5, 6, 7 և 12, 13 կետերի պահանջներին վերաբերվող մանրամասն նախագծեր: Գլխավոր հատակագիծ, ուղեգծերի հատակագծեր, երկայնական և լայնական կտրվածքներ, կառույցների և հանգույցների կոնստրուկտիվ լուծումներ, բարեկարգում: Տեղանքի հանույթներ (ուղեգծի հանույթ՝ Մ 1:1000, տարածքի հանույթ՝ Մ 1:500) , երկրաբանական հետազոտություն, տարածքի ուղղաձիգ հատակագծում: Չափագրական գծագրեր (հատակագծեր, կտրվածքներ, ներառել լուսանկարներ): Նախագծվող կառույցների հատակագծեր, կտրվածքներ, հատույթներ, հանգույցներ և այլն Մ 1:100, Մ 1:50, Մ 1:20 : Կոնստրուկտիվ տարրերի գծագրեր, մանրամասն և հավաք մասնագրեր և այլն:	6	6
Գիրք-3	Աշխատանքային ծավալների ամփոփագիր	Աշխատանքային ծավալների մանրամասն նկարագրումով, ծավալների քանակներով, միավոր և ընդհանրական գների դատարկ սյունակներով: 1.Ծավալաթերթ-նախահաշիվ, նշելով բոլոր ներառված աշխատանքների ծավալները և միավոր գները, ներառյալ բոլոր անուղղակի ծախսերը, բացի շահույթից և ԱԱՀ-ից: Շահույթը և ԱԱՀ-ն կիրառել ծավալաթերթ-նախահաշվի վերջում:	3	1
Գիրք-4	Շինարարության կազմակերպում	Ըստ անհրաժեշտության գոյություն ունեցող շինությունների քանդման նախագիծ, Շինարարության կազմակերպման տեխնոլոգիական հիմնական պրոցեսների նկարագրությամբ, անհրաժեշտ մարդկային և մեքենա-մեխանիզմների քանակի գնահատմամբ, հիմնական աշխատանքի իրականացման օրացուցային գրաֆիկի կազմման, հենանիշերի աղյուսակներ, համաձայնեցումներ, օգտագործվող նյութերի և սարքավորումների տեխնիկական մասնագրեր ու նկարագրություններ, հաճախականությունների և այլն: Կատարված աշխատանքների մատակարված նյութերի խմբաքանակների լաբարատոր ստուգման հաճախականության և նմուշառման տեսակի ու քանակի	6	2

		վերաբերյալ պահանջներ, ըստ գործող նորմերի, նշել պահանջի հիմքերը:		
Գիրք-5	Նախահաշիվներ	Մանրամասն ըստ օբյեկտների նախահաշիվների կազմում՝ • Ըստ գործող նորմերի	3	1

*Գիրք-2-ում հայերեն և ռուսերեն տարբերակները կարող են համատեղվել

– Նախագծանախահաշվային երկլեզու փաստաթղթերի էլեկտրոնային փաթեթի ներկայացում՝ **էլեկտրոնային կրիչով**, տեքստային և գծագրական նյութերը՝ CAD և PDF ֆորմատներով, նախահաշիվը և ծավալաթերթը՝ EXCEL տարբերակներով

***Էլեկտրոնային կրիչում ներառվող ֆայլերը պետք է ունենան պարունակությանը համարժեք անվանումներ, և զերծ լինեն կողմնակի ինֆորմացիայից:**

Նախագծային փաստաթղթերի մշակման արդյունքում նախագծողը պետք է ներկայացնի նաև՝ շինարարական նյութերի, պատրաստվածքների (շահագործման) նկատմամբ պահանջներ

- նյութերի, պատրաստվածքների շահագործման առավելագույն ժամկետ՝ WORD տարբերակով
- նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ արտադրված նյութերի, պատրաստվածքների ցանկ՝ WORD տարբերակով
- էներգաարդյունավետություն ապահովող միջոցառումների, սարքավորումների և նյութերի ցանկ՝ WORD տարբերակով

Նախագծում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում-բնութագրում՝ նախագծի մասնագրերում և նախահաշվում՝ նշելով տվյալ ապրանքը բնութագրող հիմնական տեխնիկական ցուցանիշները,

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեղական արտադրության և Հայաստան ներմուծվող շինանյութերի օգտագործում,
Ջերմամեկուսիչ նյութեր՝ բազալտի հումքով մանրաթելային հանքաբամբակե սալերով,
Քանդման (ապամոնտաժման) աշխատանքները նախատեսել գործող նորմերին համապատասխան

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011055382
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

_____ Գ. Եղիազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<Մաստարա>> ԱԿ
ՀՀ Սյունիքի մարզ, ք. Գորիս, Բակունցի 66
<<Արդշինբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 247570022779
ՀՎՀՀ 09203764
Տնօրեն՝

_____ Ա. Ալեքսանյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
10.04. 2025թ. կնքված
N ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-25/1 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/34	«Երևանի Միքայել Նալբանդյանի անվան հ. 33 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի նախագծանախահաշվային փաստաթղթերը ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի «Ձորակապ միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տարածքում տեղակապման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայություն	-	-	-	-	-	-	4 602 000	4 602 000	4 602 000	4 602 000	4 602 000	4 602 000	**4 602 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011055382
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

_____ Գ. Եղիազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
<<Մաստարա>> ԱԿ
ՀՀ Սյունիքի մարզ, ք. Գորիս, Բակունցի 66
<<Արդշինբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 247570022779
ՀՎՀՀ 09203764
Տնօրեն՝

_____ Ա. Ալեքսանյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 3
10 . 04 . 2025թ. կնքված
N ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-25/1 գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց՝	Ծառայությունն ընդունեց՝
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
10. 04. 2025թ. կնքված
N ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-25/1 գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց՝
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 4
10. 04. 2025թ. կնքված
N ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-25/1 գնման պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«--------/--------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.11 կետով սահմանված պահանջներին:

_____ _____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.

Արդշինբանկ

№ 1971-3651

«08» 04 2025 թ.

ԵՐԱՇԽԻՔ N ՀԲԵՀ25/86-57
(պայմանագրի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ՄԱՍՏԱՐԱ» Ա/Կ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքվելիք N ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-25/1 պայմանագրից (այսուհետ՝ նաև պայմանագիր) բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Արդշինբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 460,500.0 (չորս հարյուր վաթսուն հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումար (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին՝ փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքն ուժի մեջ է մտնում տրամադրման պահից և գործում է մինչև 28.02.2026 թվականը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ tender4@minurban.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին՝ գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-25/1 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՓՄՁ վարկերի կենտրոնացված
ձևակերպումների բաժնի պետ՝ Մարիաննա Լոփոյան

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
«ARDSHINBANK» CJSC
02566492 21566

ՀՀ, 0015, ք. Երևան, Գր. Լուսավորչի փող., 13
(+374 12) 222222 / office@ardshinbank.am / ardshinbank.am

Արդշինբանկ

№ 1971-3652

«08» 04 2025թ.

ԵՐԱՇԽԻՔ N ՀԲԵՀ25/87-57
(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-25/1 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ՄԱՍՏԱՐԱ» Ա/Կ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք N ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-25/1 պայմանագրով (այսուհետ՝ նաև պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «Արդշինբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 690,750.0 (վեց հարյուր իննսուն հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ գումար (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի՝ 900008000664 հաշվեհամարին՝ փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքն ուժի մեջ է մտնում տրամադրման պահից և գործում է մինչև 28.02.2026 թվականը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ tender4@minurban.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին՝ գրավոր ձևով:

Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-25/1 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՓՄՁ վարկերի կենտրոնացված
ձևակերպումների բաժնի պետ՝ Մարիաննա Լոփոյան

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
«ARDSHINBANK» CJSC
02566492 21566

ՀՀ, 0015, ք. Երևան, Գր. Լուսավորչի փող., 13
(+374 12) 222222 / office@ardshinbank.am / ardshinbank.am